Արձանագրության 3

Երևան քաղաքի փողոցների, բակային տարածքների և մայթերի ասֆալտբետոնյա ծածկի վերանորոգման, ճաքալցման և գրունտային փողոցների հիմնանորոգման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայությունների ձեռքբերման ԵՔ-ԲՄԾՁԲ-19/23 ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի նիստի

ք. Երևան 17.04.2019թ.
Ժամը՝ 10:45

Մասնակցում էին
Հանձնաժողովի նախագահ՝ Տ. Իգիթյան/ԳԱՊ/
Հանձնաժողովի անդամներ՝ Ա. Կիրակոսյան /գնահատող/, Ռ. Աբրահամյան /գնահատող/
Ա. Հարությունյան /բացող/, Կ. Հարությունյան /բացող/
Հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Համբարձումյան

1. ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից ներկայացված եզրակացության մասին

(Տ. Իգիթյան)

1. Ընդունել ի գիտություն որ.

1.1 «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» ՀՀ կառավարության 526-Ն որոշմամբ հաստատված կարգի /այսուհետ՝ Կարգ/ 43-րդ կետի 3-րդ ենթակետի՝ հարցում էր ներկայացվել առաջին տեղ զբաղեցրած մասնակիցների՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների առկայության վերաբերյալ:

ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից սահմանված ժամկետում ներկայացվել է եզրակացություն, համաձայն որի մասնակիցները հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով չունեն ժամկետանց հարկային պարտավորություն:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5 դեմ - 0:

2. Ընթացակարգի հայտերի գնահատման արդյունքների հաստատման մասին

(Տ. Իգիթյան)

Հիմք ընդունելով սույն արձանագրության 1-ին կետը՝ հանձնաժողովը որոշեց հաստատել ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակցի հայտի գնահատման արդյունքները.

Մասնակցի անվանումը	Հայտի գնահատականը
Տեխ Դրաֆտ ՍՊԸ	Բավարար
Հուսալի Կամար ՍՊԸ	Բավարար
ՀՀ նախագծերի պետական արտագերատեսչական փորձաքննություն ՓԲԸ	Բավարար

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5 դեմ - 0:

3. ԵՔ-ԲՄԾՁԲ-19/23 ծածկագրով գնման ընթացակարգի ընտրված մասնակիցների և պայմանագիր կնքելու որոշում ընդունելու մասին

(Տ. Իգիթյան)

3.1 Հիմք ընդունելով սույն արձանագրության 2-րդ կետով ընդունած որոշումը՝ «ԵՔ-ԲՄԾՁԲ-19/23» ծածկագրով ընթացակարգի ընտրված մասնակիցներ հայտարարել.

-1-6-րդ, 8-րդ չափաբաժինների մասով «Տեխ Դրաֆտ» ՍՊԸ-ին,

-7-րդ չափաբաժնի մասով «Հուսալի Կամար» ՍՊԸ-ին,

-9-րդ և 10-րդ չափաբաժինների մասով «ՀՀ նախագծերի պետական արտագերատեսչական փորձաքննություն» ՓԲԸ-ին

և վերջիններիս ներկայացնել շինարարական աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայությունների մատուցման պայմանագիր կնքելու առաջարկ,

3.2 Հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը և սահմանել անգործության ժամկետ տասն օրացուցային օր:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

4. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման ժամանակացույցը հաստատելու մասին

(Տ. Իգիթյան)

- Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել գնման պայմանագիր կնքելուն օրվան հաջորդող աշխատանքային օրը ժամը 10:45-ին, Երևանի քաղաքապետարանի վարչական շենքում, հասցե՝ ք. Երևան, Արգիշտի փողոց 1:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5 դեմ - 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ ---------- Տ. Իգիթյան

Անդամներ՝ ---------- Ա. Կիրակոսյան

---------- Կ. Հարությունյան

---------- Ա. Հարությունյան

---------- Ռ. Աբրահամյան

Քարտուղար՝ ---------- Ա. Համբարձումյան